



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից “03”. 06. 2016 թ. (արձ. №)	Վավերացնում եմ ՀԱԱՀ ռեկտոր _____ Ա. Թարվերդյան “06”. 06. 2016 թ.
--	---

ՀԱԱՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2016

Բովանդակություն

1. Նշանակությունը և կիրառման ոլորտ
2. Նորմատիվային փաստաթղթեր
3. Ընդհանուր դրույթներ
4. Ամփոփիչ ատեստավորման ձևերը
5. Պետական քննական հանձնաժողով
6. Ամփոփիչ ատեստավորման կազմակերպումը և անցկացումը
- 6.1. Ամփոփիչ ատեստավորման պլանավորումը և կազմակերպումը
- 6.2. Ամփոփիչ ատեստավորման անցկացումը
7. Ատեստավորման արդյունքների ամփոփում
8. Մասնագիտական որակավորման շնորհում
9. Ամփոփիչ ատեստավորման անբավարար գնահատում
10. Հավելվածներ

Հավելված Ա. Պետական քննության գնահատման չափորոշիչներ

Հավելված Բ. Ավարտական որակավորման աշխատանքի գնահատման չափորոշիչներ

Հավելված Գ. Ավարտական աշխատանքի պաշտպանության նիստի արձանագրության
ձև

Հավելված Դ. Ամփոփիչ քննության հանձնաժողովի նիստի արձանագրության ձև

Հավելված Ե. Ատեստավորման բոլոր քննությունները հանձնած շրջանավարտներին
Որակավորում շնորհելու մասին արձանագրության ձև

Հավելված Զ. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվության ձև

Հավելված Է. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի հաստատման
հրամանի ձև

**ՀԱԱՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԿԱՐԳ**

1. Նշանակություն և կիրառման ոլորտ

- 1.1. Սույն կարգը նախատեսված է ՀԱԱՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացը կանոնակարգելու համար և տարածվում է բոլոր ձևերով ուսուցում ստացող շրջանավարտների վրա:
- 1.2. Ամփոփիչ ատեստավորման նպատակն է պարզել շրջանավարտի պատրաստման մակարդակի համապատասխանությունը ստացած կրթությանը:

2. Նորմատիվային փաստաթղթեր

ՀՀ կրթության մասին օրենքը

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ

3. Ընդհանուր դրույթներ

- 3.1. Ամփոփիչ ատեստավորման ժամանակ ստուգվում է շրջանավարտների գիտելիքների և կարողությունների յուրացումը սահմանված առարկաների բովանդակության համաձայն:
- 3.2. Պետական քննության առարկաների բաժինների բովանդակությունը պետք է ներառված լինի մասնագիտությունների կրթական ծրագրերի (ՄԿԾ) մեջ և հասանելի լինի ուսանողին:
- 3.3. Պետական քննության պատրաստման համար հարցաշարերը ներառվում են ՄԿԾ-երի հավելվածներում և փակցվում են մասնագիտական ամբիոնում՝ ուսանողներին հասանելի լինելու նպատակով:
- 3.4. Ավարտական որակավորման աշխատանքների թեմաները կարող են առաջարկվել տվյալ մասնագիտությամբ աշխատող կազմակերպությունների կողմից: Ավարտական որակավորման աշխատանքի թեման հաստատվում է համալսարանի ռեկտորի կողմից:
- 3.5. Ավարտական որակավորման աշխատանքի բովանդակության, ծավալի և կառուցվածքի վրա դրվող պահանջները բերվում են դիպլոմային նախագծի/աշխատանքի կատարման մեթոդական ցուցումներում:

4. Ամփոփիչ ատեստավորման ձևերը

- 4.1. Ամփոփիչ ատեստավորումը նախատեսված է ուսումնառության ողջ ընթացքում ստացված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման համար:
- 4.2. Համալսարանի մասնագիտությունների համար՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի և ուսումնական պլանների համաձայն, սահմանվում են հետևյալ հիմնական վերջնական ատեստավորման ձևերը՝
 - Ամփոփիչ քննություն (պետական քննություն/ներ),

- Ավարտական աշխատանքի պաշտպանություն (դիպլոմային աշխատանքի/նախագծի, մագիստրական թեզի պաշտպանություն):

5. Պետական քննական հանձնաժողով

- 5.1. Պետական քննական հանձնաժողովը կազմվում է միասնական ձևով ըստ մասնագիտությունների:
- 5.2. Մեծաքանակ շրջանավարտների դեպքում նույն մասնագիտության գծով կազմակերպվում են երկու և ավելի հանձնաժողովներ, իսկ փոքրաքանակի դեպքում՝ հարակից մասնագիտությունների գծով կազմակերպել միացյալ մեկ հանձնաժողովով:
- 5.3. Քննական հանձնաժողովի գործունեության ոլորտի մեջ են մտնում շրջանավարտի տեսական գիտելիքների մակարդակի, նրա պրակտիկ աշխատանքի նախապատրաստվածության աստիճանի ստուգումը, համապատասխան որակավորման շնորհումը, մասնագետների պատրաստման որակի բարելավման վերաբերյալ առաջարկությունների մշակումը և այլն:
- 5.4. Մինչև ութ հոգով կազմված պետական քննական հանձնաժողովի կազմը բաղկացած է հանձնաժողովի նախագահից և անդամներից, որը կազմակերպվում է ամեն տարի և գործում է ամբողջ տարվա ընթացքում:
- 5.5. Պետական քննական հանձնաժողովի նախագահին նշանակում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, համալսարանի ռեկտորի առաջարկությամբ տվյալ մասնագիտությամբ արտադրության առավել խոշոր մասնագետների կամ գիտնականների թվից, որոնք համալսարանի հիմնական աշխատողներ չեն:
- 5.6. Քննական հանձնաժողովի մեջ որպես անդամներ կարող են ընդգրկվել համալսարանի ռեկտորը կամ պրոռեկտորը, տվյալ ֆակուլտետի դեկանը կամ տեղակալը, թողարկող ամբիոնի վարիչը(ները), առանձին առարկաների գծով դասախոսներ, արտադրության և այլ մարմիններում աշխատող մասնագետներ, պրոֆեսորներ ու դասախոսներ այլ բուհերից, ինչպես նաև գիտահետազոտական հիմնարկներից աշխատողներ:
- 5.7. Որպես քննող դասախոս հանձնաժողովի մեջ կարելի է ընդգրկել համապատասխան ամբիոնի դասախոս՝ պայմանով, եթե հանձնաժողովի կազմում չկա տվյալ ամբիոնի համապատասխան ներկայացուցիչ: Այս դեպքում հանձնաժողովի մեջ ընդգրկված քննող դասախոսը օգտվում է հանձնաժողովի անդամի իրավունքներից:
- 5.8. Հանձնաժողովի անդամներ նշանակվում են ռեկտորի հրամանով հանձնաժողովի աշխատանքների սկսելուց առնվազն 10 օր առաջ:
- 5.9. Պետական քննական հանձնաժողովը աշխատում է ուսումնական պլանով նախատեսված ժամկետավորված գրաֆիկով, իսկ հեռակա ուսուցման գծով՝ ելնելով հնարավորություններից, անհրաժեշտության դեպքում կարելի է կազմակերպել այլ ժամկետում:
- 5.10. Պետական քննական հանձնաժողովի աշխատանքային գրաֆիկը սահմանվում է ուսումնական պլանի համաձայն:

6. Ամփոփիչ ատեստավորման կազմակերպումը և անցկացումը

6.1. Ամփոփիչ ատեստավորման պլանավորումը և կազմակերպումը

- 6.1.1. Պետական քննության կամ դիպլոմային աշխատանքի (նախագիծ) պաշտպանության թույլատրվում են այն ուսանողները, որոնք ամբողջությամբ կատարել են ուսումնական պլանով նախատեսված ծրագրերը: Քննության կամ դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանության թույլատրված ուսանողների ցուցակը հանձնաժողովին է ներկայացնում ֆակուլտետի ղեկանը:
- 6.1.2. Պետական քննական կամ դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանության աշխատանքային օրերը համաձայնեցվում են հանձնաժողովի նախագահի հետ, որոնք ղեկանի ներկայացմամբ հաստատվում են ուսումնական գծով պրոռեկտորի կողմից մեկ ամիս առաջ: Հանձնաժողովի աշխատանքի օրվա տևողությունը չպետք է գերազանցի 6 ժամից:
- 6.1.3. Պետական քննական հանձնաժողովին ներկայացվում են հետևյալ հիմքերը.
- ա) Ուսումնական պլանով նախատեսված ծրագրի կատարման վերաբերյալ հիմքեր, տեսական առարկաներից, կուրսային աշխատանքներից (նախագծերից) ուսումնական և արտադրական պրակտիկաներից ուսանողի ստացած գնահատականները, որոնք ընթերցվում են հանձնաժողովի նիստում:
Եթե առարկան ունեցել է մի քանի քննություն, ապա հաշվում են վերջինը, իսկ եթե այն չի արտահայտում ուսանողի գիտելիքների մակարդակը, ապա ամբիոնին թույլատրվում է որոշել, թե որ կիսամյակի գնահատականը հաշվել:
 - բ) Դիպլոմային աշխատանքի (նախագծի) ղեկավարի կարծիքը:
 - գ) Գրախոսողի կողմից տրված գրախոսականը:
- 6.1.4. Արտադրական հետաքրքրություն ներկայացնող դիպլոմային աշխատանքների (նախագծերի) պաշտպանությունը կարելի է կազմակերպել նաև տնտեսություններում, հիմնարկներում, ձեռնարկություններում:
- 6.1.5. Դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությունը կամ պետական քննությունների հանձնելը կատարվում է պետական քննական հանձնաժողովի բաց նիստում, հանձնաժողովի կազմի 2/3 ից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում:

6.2. Ամփոփիչ ատեստավորման անցկացումը

- 6.2.1. Քննությունները անցկացվում են հարցատոմսերով, որոնք կազմվում են ուսումնական պլանով նախատեսված ծրագրին խիստ համապատասխան:
- 6.2.2. Ամեն առարկայի պետական քննության կամ մեկ դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանությանը հատկացվում է 45 րոպե ժամանակ, որից մինչև 20 րոպեն դիպլոմային աշխատանքի (նախագծի) բովանդակության ներկայացման համար:
- 6.2.3. Ամփոփիչ ատեստավորումը (պետական քննությունը) անցկացվում է գրավոր և բանավոր տեսքով:
- 6.2.4. Պետական քննության կամ դիպլոմային աշխատանքի (նախագծի) արդյունքները գնահատվում են 5 (հինգ), 4 (չորս), 3 (երեք), 2 (երկու) նիշերով՝ ըստ գնահատման չափորոշիչների (հավելված Ա, Բ), հայտարարվում է նույն օրը և ձևակերպվում է պետական քննական հանձնաժողովի նիստի արձանագրությամբ:

- 6.2.5. Շրջանավարտի որակավորման աշխատանքը (դիպլոմային նախագիծը/աշխատանքը) դիտարկվում է որպես ուսանողի կողմից կատարվող ավարտական ինքնուրույն աշխատանք, որում համակարգվում, ամրապնդվում և ընդլայնվում են տեսական և գործնական հմտությունները, ստացված առարկաների ցիկլերը ուսումնասիրելիս:
- 6.2.6. Դիպլոմային նախագծի/աշխատանքի կամ թեզի պատրաստումը և պաշտպանությունը ուսանողի ուսումնառության վերջնական փուլն է, որի նպատակն է համակարգել, ամրապնդել և ընդլայնել տեսական և գործնական գիտելիքները տվյալ մասնագիտության գծով և նրանց կիրառումը կոնկրետ արտադրական, տեխնիկական, տեխնոլոգիական, տնտեսագիտական և գիտական խնդիրներ լուծելիս:
- 6.2.7. Պաշտպանության թույլատրվում է ամբողջ կրթական ծրագիրը ավարտած ուսանողը:
- 6.2.8. Ավարտական որակավորման աշխատանքի պաշտպանությունը անցկացվում է պաշտպանության քննական հանձնաժողովի ներկայությամբ ըստ հետևյալ կարգի՝
- ուսանողի ներկայացումը քննական հանձնաժողովին,
 - ուսանողի կողմից ավարտական որակավորման աշխատանքի ներկայացումը պատկերավոր նյութերի և համակարգչային տեխնիկայի միջոցով, նշելով ստացված արդյունքները և դրանց վերլուծությունը (20 րոպե),
 - ուսանողի ներկայացումից հետո պաշտպանության քննական հանձնաժողովի կողմից տրվող հարցեր,
 - հանձնաժողովի անդամների հարցերին ուսանողի կողմից տրվող պատասխաններ,
 - ավարտական որակավորման աշխատանքին տրված գրախոսականի լսում,
 - ուսանողի կողմից տրված պատասխանները գրախոսողի դիտողություններին:
- 6.3. Մեկ ավարտական որակավորման աշխատանքի պաշտպանության ողջ ընթացքը, որպես կանոն, չպետք է գերազանցի 45 րոպեն:
- 6.4. Ամփոփիչ ատեստավորման ողջ ընթացքը ձայնագրվում է: Ձայնագրիչ սարքերը տրամադրվում են համալսարանի ՏՏ և ԻՕ կենտրոնի կողմից:

7. Ատեստավորման արդյունքների ամփոփում

- 7.1. Պետական քննական հանձնաժողովը որոշումները ընդունում է փակ նիստում, բաց քվեարկությամբ, նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ եթե ձայները բաշխվում են հավասար, ապա նախագահի ձայնը համարվում է որոշիչ:
- 7.2. Պետական և ավարտական դիպլոմային աշխատանքների քննական հանձնաժողովի բոլոր նիստերը արձանագրվում են համապատասխան ձևերում (Հավելված Գ, Դ, Ե, Ջ): Արձանագրությունը ստորագրվում է հանձնաժողովի նիստին մասնակցած բոլոր անդամների կողմից և այն գրքի ձևով պահվում է համալսարանում:

- 7.3. Վերջնական քննական գնահատականը ուսանողներին հայտնվում է քննության ամբողջ ընթացքը ավարտելուց հետո:
- 7.4. Պետական քննական հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովի նախագահը երկու շաբաթվա ընթացքում հաշվետվություն է ներկայացնում, որտեղ նշվում է տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստվածության որակական մակարդակը, նախագծերի (աշխատանքների) կատարման որակը, նրանց թեմաների համապատասխանությունը, գյուղատնտեսական գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիաների ժամանակակից մակարդակին, ինչպես նաև առաջարկություններ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման վերաբերյալ:
- 7.5. Պետական քննական հանձնաժողովի հաշվետվությունը քննարկվում և հաստատվում է ֆակուլտետի գիտ. խորհրդում:

8. Մասնագիտական որակավորման շնորհում

- 8.1. Դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանությունից կամ պետական քննություն հանձնելուց հետո շրջանավարտներին պետական քննական հանձնաժողովի կողմից շնորհվում է մասնագիտական որակավորում, հանձնելով դիպլոմ և կրծքանշան:
- 8.2. Ուսուցման ընթացքում ուսումնական պլանով նախատեսված բոլոր քննական առարկաների 75% հինգ ստացած, իսկ մնացած առարկաներից չորս գնահատականներ ստացած դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանությունը կամ պետական քննությունը հինգ նիշով հանձնած ուսանողին տրվում է գերազանցության դիպլոմ:

9. Ամփոփիչ ատեստավորումից անբավարար գնահատում

- 9.1. Պետական քննական առարկաներից անբավարար ստացած ուսանողը կարող է շարունակել մնացած առարկաների քննությունները:
- 9.2. Պետական քննությունից անբավարար գնահատական ստացած ուսանողը թույլատրվում դիպլոմային նախագծի պաշտպանությանը:
- 9.3. Պետական քննության ժամանակ առարկայից անբավարար գնահատական ստացած ուսանողը երկրորդ անգամ այն կարող է հանձնել հաջորդ տարում, կամ ռեկտորի թույլտվությամբ՝ հանձնաժողովի աշխատաժամանակաշրջանում:
- 9.4. Եթե դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանությունից ուսանողը ստանում է անբավարար գնահատական, ապա պետական քննական հանձնաժողովը որոշում և արձանագրում է, որ ուսանողը նույն թեմայի վերամշակումից հետո կարող է երկրորդ անգամ պաշտպանել, կամ պարտավոր է կատարել նոր թեմա, որը սահմանվում է համապատասխան ամբիոնի կողմից:
- 9.5. Պետական քննությունից կամ դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանությունից անբավարար գնահատական ստացած ուսանողը ազատվում է համալսարանից, և նրան տրվում է ընդունված ձևի ակադեմիական տեղեկանք:
- 9.6. Այն ուսանողների համար, որոնք չեն հանձնել պետական քննությունները կամ չեն պաշտպանել դիպլոմային նախագիծը (աշխատանքը) հարգելի պատճառով, ռեկտորը կարող է երկարացնել նրանց ուսուցման ժամկետը մինչև պետական քննական հանձնաժողովի աշխատանքի հաջորդ քննաշրջանը, բայց մեկ տարուց ոչ ավելի:

9.7. Սահմանված ժամկետներում դիպլոմային աշխատանքը (նախագիծը) չպաշտպանած կամ պետական քննություն չհանձնած ուսանողները ազատվում են համալսարանից, կամ թույլատրվում է երեք տարվա ընթացքում հանձնել պետական քննությունը կամ պաշտպանել դիպլոմային աշխատանքը (նախագիծը) տեսական կուրսն ավարտած տարվա ուսումնական պլանով նախատեսված ծրագրերով:

10. Ամփոփիչ ատեստավորումից ստացած գնահատականի բողոքարկում

10.1. Ամփոփիչ ատեստավորումից (ավարտական պետական քննություն, դիպլոմային նախագիծ/աշխատանքի պաշտպանություն) ստացած գնահատականի բողոքարկումն իրականացվում է համաձայն ՀՀ Կրթության և Գիտության նախարարի 2011 թ.-ի հոկտեմբերի 31-ի № 1197-Ն հրամանով հաստատված “Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի” 33-րդ կետի:

10.2. Ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման ընթացակարգային պահանջներն են.

- 1) Շրջանավարտը կարող է բողոքարկել ամփոփիչ ատեստավորման կամ ավարտական աշխատանքի, մագիստրոսի թեզի գնահատականը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի, կամ առարկայական հանձնաժողովի նախագահին, արդյունքները հրապարակելուց հետո 1 ժամվա ընթացքում:
- 2) Գրավոր բողոքը ներկայացվում է հանձնաժողովի նախագահին, որի քննարկումը կազմակերպվում է նույն օրը:
- 3) Գրավոր բողոքի քննարկմանը մասնակցում են համալսարանի վարչական կազմի, տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատակիցը և ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են համալսարանի ռեկտորի կողմից:
- 4) Շրջանավարտի ներկայությամբ լսվում է միայն պատասխանի ձայնագրությունը, առանց այլ հարցեր տալու: Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կայացվում է որոշում.
 - ա) գնահատականը թողնել ամփոփոխ,
 - բ) գնահատականը բարձրացնել:
- 5) Ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, համալսարանի վարչական կազմի և ուսանողական խորհրդի ներկայացուցիչների և շրջանավարտի կողմից: Կայացված որոշմանը անհամաձայնությունը հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:
- 6) Գնահատականի փոփոխման դեպքում արձանագրությունների հատուկ մատյանում կատարվում է համապատասխան գրառում:

Պետական քննության գնահատման չափորոշիչներ

Պետական քննական տոմսում նշված հարցերին պատասխանները գնահատվում են ըստ հետևյալ չափորոշիչների՝

Գերազանց՝

- եթե շրջանավարտը ցուցաբերում է մասնագիտական խորը գիտելիքներ,
- բովանդակային, տրամաբանական և հաջորդական ներկայացնում է հարցերի պատասխանները,
- գրագետ հիմնավորում է պատասխանները,
- համակցում է տեսական նյութը գործնական օրինակներով առանց սխալների:

Լավ՝

- եթե շրջանավարտը ցուցաբերում է մասնագիտական գիտելիքներ,
- գրագետ և ըստ էության ներկայացնում է պատասխանները,
- պատասխանում է տրված հարցերին, առանց էական սխալներ թույլ տալու:

Բավարար՝

- եթե շրջանավարտը ցուցաբերում է մասնագիտական գիտելիքներ, սակայն մանրամասն չի տիրապետում ծրագրին,
- թույլ է տալիս անճշտություններ, չի պահպանում ներկայացվող նյութի հաջորդականությունը,
- դժվարանում է համակցել տեսական և գործնական գիտելիքները:

Անբավարար՝

- եթե շրջանավարտը չի տիրապետում մասնագիտական ծրագրի մեծ մասը,
- թույլ է տալիս կոպիտ սխալներ նյութը ներկայացնելիս,
- չի կարողանում տեսականը և գործնականը համակցել իրար հետ:

Ավարտական (դիպլոմային) աշխատանքի գնահատման չափորոշիչներ

Ավարտական որակավորման աշխատանքի գնահատման չափորոշիչներն են՝

- **գերազանց՝** եթե շրջանավարտի աշխատանքը ունի հետազոտական բնույթ, գրագետ շարադրված է տեսական մասը, բովանդակային և տրամաբանորեն ներկայացված է աշխատանքը, եզրակացությունները ունեն լուրջ հիմնավորում: Աշխատանքի ներկայացման ժամանակ ցուցաբերում է խորը մասնագիտական գիտելիքներ, տիրապետում է ժամանակակից հետազոտական մեթոդներին, հեշտությամբ պատասխանում է տրված հարցերին: Ավարտական որակավորման աշխատանքը ունի դրական կարծիքներ ղեկավարի և գրախոսողի կողմից:
- **լավ՝** եթե շրջանավարտի աշխատանքը ունի հետազոտական բնույթ, գրագետ ներկայացված է տեսական մասը, հաջորդական և տրամաբանորեն շարադրված են աշխատանքի բոլոր գլուխները: Պաշտպանության ժամանակ աշխատանքը ներկայացնում է տրամաբանորեն, պատասխանում է տրված հացերի մեծ մասին: Ավարտական որակավորման աշխատանքը ունի դրական կարծիքներ ղեկավարի և գրախոսողի կողմից:
- **բավարար՝** եթե շրջանավարտի աշխատանքը ունի հետազոտական բնույթ: Աշխատանքը ներկայացված է ամբողջովին, սակայն վերլուծությունը կատարված մակերեսորեն: Պաշտպանության ժամանակ ուսանողը անվստահ է ներկայացնում աշխատանքը, տրված հարցերին չի տալիս սպառիչ պատասխաններ: Ավարտական որակավորման աշխատանքի վերաբերյալ ղեկավարի և գրախոսողի կողմից կատարված են մեթոդաբանական և վերլուծողական դիտողություններ:
- **անբավարար՝** եթե շրջանավարտի աշխատանքը չունի հետազոտական բնույթ, չի բավարարում դիպլոմային նախագծի/աշխատանքի կատարման պահանջներին: Աշխատանքում բացակայում են եզրակացությունները, կամ դրանք ներկայացված են թերություններով: Պաշտպանության ժամանակ տրված հարցերին ուսանողը դժվարանում է պատասխանել, պատասխանի դեպքում թույլ է տալիս կոպիտ սխալներ: Ավարտական որակավորման աշխատանքի վերաբերյալ ղեկավարի և գրախոսողի կողմից կատարված է լուրջ դիտողություններ:

ԴԻՊԼՈՄՍՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ/ՆԱԽԱԳԾԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ __

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

« _____ » _____ 20__ թ.

կայացած նիստի (Ժամը _____ մինչև Ժամը _____)

Շրջանավարտ _____
(ազգանուն, անուն, հայրանուն, ֆակուլտետ/դեպարտամենտ, մասնագիտություն)

_____ թեմայով
ավարտական աշխատանքի քննարկման վերաբերյալ

Մասնակցում էին՝

Քննական հանձնաժողովի նախագահ _____
ազգանուն, անուն, հայրանուն

Քննական հանձնաժողովի անդամներ _____
ազգանուն, անուն, հայրանուն

ազգանուն, անուն, հայրանուն

ազգանուն, անուն, հայրանուն

Դիպլոմային աշխատանքը/նախագիծը կատարված է

_____ դեկավարությամբ
(ազգանուն, անուն, հայրանուն, գիտական կոչում, աստիճան)

Գրախոսող _____
(ազգանուն, անուն, հայրանուն, գիտական կոչում, աստիճան)

Խորհրդատու(ներ) _____
(ազգանուն, անուն, հայրանուն, գիտական կոչում, աստիճան)

(ազգանուն, անուն, հայրանուն, գիտական կոչում, աստիճան)

Ամփոփիչ առեւտավորման հանձնաժողովին ներկայացված են հետևյալ նյութերը՝
ա) _____ ֆակուլտետի/դեպարտամենտի
դեկանատի 20__ թ. _____ տեղեկանքը շրջանավարտի հանձնած
քննությունների, ստուգարքների և ուսումնական պլանի պահանջների կատար-
ման մասին:

- բ) Հաշվարկային բացատրագիրը _____ էջ _____:
- գ) Դիպլոմային աշխատանքին/նախագծին կից զծապատկերները ____ թերթ:
- դ) Դիպլոմային աշխատանքին/նախագծին կից աղյուսակները ____ թերթ:
- ե) Ղեկավարի կարծիքը ____ էջ:
- զ) Գրախոսողի կարծիքը ____ էջ:
- է) Համառոտ եզրակացությունը աշխատանքի վերաբերյալ _____
- _____
- _____
- _____

Կատարված աշխատանքի վերաբերյալ (____ բուպե) հաղորդումից հետո շրջանավարտին տրվել են հատկյալ հարցերը՝

1. _____
(հարց տվող անձի ազգանունը, հարցի բովանդակությունը)
2. _____
(հարց տվող անձի ազգանունը, հարցի բովանդակությունը)
3. _____
(հարց տվող անձի ազգանունը, հարցի բովանդակությունը)
4. _____
(հարց տվող անձի ազգանունը, հարցի բովանդակությունը)

**ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ/ՆԱԽԱԳԾԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

1. Համարել, որ շրջանավարտ _____
ազգանուն, անուն, հայրանուն
կատարել և պաշտպանել է ավարտական աշխատանքը _____
գնահատականով:
2. Շնորհել _____
որակավորում _____ մասնագիտությամբ:
3. Հանձնել դիպլոմ _____
(գերազանցության)

Քննական հանձնաժողովի նախագահ _____
ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

Քննական հանձնաժողովի անդամներ _____
ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

Քարտուղար _____
ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅԱՆ (ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ) ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱԳԱՐՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ____

ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅԱՆ (ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ) ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ
« ____ » _____ 20__ թ.

կայացած նիստի (Ժամը _____ մինչև Ժամը _____)

_____ առարկայի ամփոփիչ քննության
հանձնելու մասին

Ֆակուլտետ/դեղատարտամենտ և մասնագիտություն

Քննվող շրջանավարտ.

_____ անուն, ազգանուն, հայրանուն

Հարցեր.

1. _____

2. _____

3. _____

4. _____

Շրջանավարտին տրված հարցերի ընդհանուր բնութագիրը

Ընդունել, որ շրջանավարտը հանձնել է ամփոփիչ քննությունը _____
գնահատականով:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հատուկ կարծիքը

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ

ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներ

ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

Քարտուղար

ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

**ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅԱՆ (ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ) ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱԳԱՐՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱԹԵՐԹ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ____

ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅԱՆ (ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ) ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ
« ____ » _____ 20__ թ.

կայացած նիստի (Ժամը _____ մինչև Ժամը _____)

**Ատեստավորման բոլոր քննությունները հանձնած շրջանավարտներին որակավորում շնորհելու
մասին**

Մասնակցությամբ՝

Նախագահ _____
ազգանուն, անուն, հայրանուն

Անդամներ _____
ազգանուն, անուն, հայրանուն

ազգանուն, անուն, հայրանուն

ազգանուն, անուն, հայրանուն

ազգանուն, անուն, հայրանուն

Շրջանավարտ _____
ազգանուն, անուն, հայրանուն

հանձնել է ամփոփիչ ավարտական քննությունները հետևյալ գնահատականով՝

1. _____
քննական առարկայի անվանումը գնահատականը հանձման ամսաթիվը

2. _____
քննական առարկայի անվանումը գնահատականը հանձման ամսաթիվը

3. _____
քննական առարկայի անվանումը գնահատականը հանձման ամսաթիվը

Ընդունել, որ շրջանավարտ _____
ազգանուն, անուն, հայրանուն

հանձնել է _____

_____ մասնագիտության համար ուսում-

նական ծրագրով նախատեսված ամփոփիչ ատեստավորման քննական բոլոր առարկաները:

_____ին շնորհել _____

_____որակավորում:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների մասնավոր կարծիքը

Տալ դիպլոմ _____
գերազանցությամ, ոչ գերազանցության

շրջանավարտ _____ին
ազգանուն, անուն, հայրանուն

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ

ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներ

ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

Քարտուղար

ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

“ _____ ” _____ 20__ р.

Ամփոփիչ առեւտրավորմանը մասնակցած շրջանավարտների թիվը _____:

Քննությունը հանձնած շրջանավարտների ստացած գնահատականները.

Գերազանց _____

Լավ _____

Բավարար _____

Անբավարար _____

Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականները _____

Հանձնաժողովի առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ

[illegible]

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ

ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի հաստատման հրամանի ձև

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

“ ____ ” _____ 2016 թ.

№ _____

Հաստատել 20__ թվականին առկա/հեռակա ուսուցման բակալավրի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմն ըստ մասնագիտությունների.

 մասնագիտության անվանում

 ուսուցման ձև

ազգանուն, անուն	Համալսարանի ստորաբաժանման կամ կազմակերպության անվանում
ազգանուն, անուն	Համալսարանի ստորաբաժանման կամ կազմակերպության անվանում
ազգանուն, անուն	Համալսարանի ստորաբաժանման կամ կազմակերպության անվանում
ազգանուն, անուն	Համալսարանի ստորաբաժանման կամ կազմակերպության անվանում
ազգանուն, անուն	Համալսարանի ստորաբաժանման կամ կազմակերպության անվանում
ազգանուն, անուն	Համալսարանի ստորաբաժանման կամ կազմակերպության անվանում
ազգանուն, անուն	Համալսարանի ստորաբաժանման կամ կազմակերպության անվանում

Հիմք՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության
 20 __ թ.-ի “ ____ ” _____ № _____ հրամանը, ֆակուլտետների դեկանների
 և հեռակա ուսուցման դեպարտամենտի առաջարկությունները:

ՌԵԿՏՈՐ՝

Ա.Պ. Թարվերդյան